Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 18-ի նիստի N 51
արձանագրային որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հայեցակարգը մշակվել է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» հիմնադրույթներին համապատասխան: Հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները, հայեցակարգը միտված է դրանց աստիճանական զարգացմանը, նախանշելով ոլորտի հետագա զարգացումների գերակա ուղղությունները: Հայեցակարգի հիմքում դրվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը»:

## 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացումն անհրաժեշտ է դիտարկել երկրի ընդհանուր զարգացման, ազգային և պետական անվտանգության ապահովման հետևյալ հիմնական թիրախների հաղթահարման համատեքստում.

ա) կայուն տնտեսական աճի ապահովում,

բ) միջազգային և տարածաշրջանային համագործակցություն,

գ) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,

դ) բարեկեցության ապահովում և աղքատության հաղթահարում,

ե) աշխատաշուկայի պահանջարկին միտված նախանական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացում:

Վերջին տարիներին Հայաստանն ունեցել է աննախադեպ տնտեսական աճ, որը պայմանավորված է արդյունավետ տնտեսական քաղաքականությամբ: Շարունակական զարգացման կայուն տեմպի հետագա ապահովման անհրաժեշտությունը թելադրում է գիտելիքահեն տնտեսության և հասարակության ձևավորումը: Կրթությունը, որպես մարդկային ներուժի ձևավորման միջոց, կենտրոնական դերակատարում ունի այս

խնդրում: Կրթության համակարգն է բարձր մտավոր և ստեղծագործական ունակություններով օժտված, միջազգային մակարդակում մրցունակ գիտության և բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստման երաշխավորը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգը, նախադպրոցականից մինչև հետբուհական, արմատական բարեփոխումների կարիք ունի: Այն պետք է տնտեսության և հասարակության պահանջներին համահունչ կրթության ճկուն մեխանիզմների ձևավորմամբ և ռեսուրսների նպատակային ուղղորդման միջոցով որակական բարձր ցուցանիշներ արձանագրի, նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների կայուն բարեկեցությունը: Առավել առաջնային է հանդիսանում աղքատության հաղթահարումը, որտեղ կրթությունը դիտարկվում է հիմնական գերակայությունների շարքում: Նկատի ունենալով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները, այս բնագավառում ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը՝ սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

Այսպիսով, պետության զարգացման և ազգային անվտանգության ապահովման համատեքստում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառը կարիք ունի զարգացման, ինչն առաջնահերթ միտված է կրթության վարկանիշի բարձրացմանը ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Դա կամրապնդի և կընդլայնի Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի համբավը:

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի կրթության առաջիկա զարգացումը պետք է միտված լինի հետևյալ փոխպայմանավորող և փոխլրացնող գլխավոր նպատակների իրականացմանը.

ա) ապահովել կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ,

բ) զարգացնել միջազգային համագործակցության ներուժը,

գ) նպաստել անհատի ինքնության գիտակցմանը և արժևորմանը,

դ) ապահովել կրթական համակարգի ճկունությունը աշխատաշուկայի փոփոխությունների նկատմամբ, ինչպես նաև բարձր հմտություններով պահանջարկի ազդեցությունն առաջարկի ձևավորման վրա,

ե) ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

**1) Կրթական բարձրակարգ նվաճումների տարեցտարի արագացող աճ**

Կրթության համակարգի գլխավոր խնդիրը որակի ապահովումն է, ինչը պահանջում է ջանքերի ու ռեսուրսների կենտրոնացում և ենթադրում է հասարակության առավել մեծ վստահություն և պահանջատիրություն համակարգի նկատմամբ: Բարձրակարգ նվաճումները կվերականգնեն հավատը Հայաստանի կրթության ապագայի հանդեպ, ինչը կիանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Նման նվաճումների խրախուսմանն ուղղված պետական հետևողական քաղաքականությունը կնպաստի, որ կրթական համակարգի ներսում և դրսում գտնվող անհատները, խմբերն ու հաստատություններն ավելի ակտիվորեն աշխատեն կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Վերջապես, գերազանցությունը խրախուսող քաղաքականությունը կօգնի բացահայտել մասնագիտական կրթության գերազանցության օջախները` դրանք վերածելով օրինակելի կենտրոնների և նպաստելով դրանց հետագա զարգացմանը:

Մասնագիտական կրթության տարբեր ճյուղերում ձեռք բերված նվաճումներն իրենց հերթին կնպաստեն մյուս երկու գլխավոր նպատակների իրականացմանը: Նախ, նման նվաճումների շնորհիվ Հայաստանի կրթական համակարգի սովորողները, շրջանավարտներն ու հաստատությունները կարող են ներգրավվել միջազգային ցանցերում: Երկրորդ, գիտելիքի տարաբնույթ ճյուղերում ձեռքբերումները պատմականորեն հայ ինքնության մաս են կազմել, իսկ նորագույն նվաճումները կնպաստեն այդ ինքնության ամրապնդմանն ու գիտելիքի և կրթության նորովի արժևորմանը:

**2) Միջազգային համագործակցության ներուժի ձևավորում**

Միջազգային տնտեսական, հասարակական, մասնագիտական և այլ ցանցերում մասնակցությունն անհրաժեշտ է շարունակաբար նորացվող գիտելիքի համաշխարհային շտեմարանից օգտվելու, առկա գիտելիքը, փորձը արագորեն տեղայնացնելու, իսկ տեղական գիտելիքն ու նորարարությունը միջազգայնացնելու համար: Ուստի, կարևոր նպատակներից մեկը պետք է լինի անհատների և հաստատությունների միջազգային համագործակցության ներուժը զարգացնելն ու ամրապնդելը:

Միջազգային ցանցերում մասնակցություն ունենալու անհրաժեշտությունը կնպաստի Հայաստանի մասնագիտական կրթության որակի բարձրացմանը: Մյուս կողմից, Հայաստանի կրթական համակարգի սովորողների, շրջանավարտների և հաստատությունների ակտիվ մասնակցությունը միջազգային ցանցերում, ընդհանուր առմամբ, կնպաստի Հայաստանի կրթության վարկանիշի և ընդհանուր մրցունակության բարձրացմանը:

Զուգահեռաբար պետությունը բարեփոխումների գործընթացում կորդեգրի այնպիսի մոտեցումներ, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում կրթական համակարգի անհատների, խմբերի և հաստատությունների համար՝ ընդգրկվելու միջազգային ցանցերում:

### 3) Յուրահատուկ ինքնության գիտակցում և արժևորում

Ինչպես նախորդ երկու նպատակների դեպքում, այս գլխավոր նպատակը ևս, խթանում ու ամրապնդում է մյուս երկուսը: Գերազանց նվաճումների հասնելու համար անհրաժեշտ է ունենալ գիտելիքն ու աշխատասիրությունը կարևորող արժեքային համակարգ և յուրահատուկ ինքնություն, քանի որ ինքնատիպությունը նորարարության հզոր աղբյուր է: Երկրորդ, գլոբալ ցանցերում մասնակցելու համար պետք է համամարդկային արժեքների կրող լինել, իսկ նման ցանցերում չձուլվելու համար ազգային ինքնության յուրահատկություններ դրսևորել: Արժեքային բարձր որակներ կրելը միջազգային համագործակցության ասպարեզում վստահելի գործընկերոջ համբավ ձեռքբերելու անհրաժեշտ նախապայման է:

Այս ոլորտում մասնագիտական կրթական քաղաքականությունը ուղղված կլինի անհատի ինքնության գիտակցմանն ու արժևորմանը նպաստող որակների զարգացմանը, արժեքների վրա խարսխված, թափանցիկ, հաշվետու և ժողովրդավարական կրթական համակարգի զարգացմանը, որը օրինակ կհանդիսանա և նպաստավոր միջավայր կդառնա անհատական արժեքների ձևավորման համար:

## 3. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Հայեցակարգի գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է որդեգրել այնպիսի ռազմավարական մոտեցումներ, որոնք կապահովեն բարեփոխումների առավել նպատակայնություն և արդյունավետություն: Նախ, նկատի ունենալով ռեսուրսների սահմանափակությունը, անհրաժեշտ է նախապատվությունը տալ այնպիսի մոտեցումների, որոնք նվազագույն ներդրումներով առավելագույն արդյունքի ապահովման հնարավորություն են ընձեռում: Երկրորդ, առաջնայնություն տալ այն ձեռքբերումներին, որոնք, լինելով էական, նաև հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Երրորդ, ստեղծել զարգացումների համար բարենպաստ միջավայր՝ սահմանելով անհրաժեշտ կանոններ, զարգացման ուղենիշներ, որը նաև կխթանի ինքնաբուխ բարեփոխումների և նվաճումների հասնելու ներուժի դրսևորմանը:

Չորրորդ՝ ՄԿՈՒ համակարգի պլանավորումն իրականացնել աշխատաշուկայի և երկրի տնտեսական զարգացման ընթացիկ և ռազմավարական կարիքներին համապատասխան:

Նման դիրքորոշմամբ է պայմանավորված ստորև բերված հիմնական ռազմավարական մոտեցումների ընտրությունը.

ա) ձևավորել ներուժի և հնարավորությունների դրսևորման բարենպաստ միջավայր,

բ) կիրառել ռեսուրսների բաշխման տարբերակված մոտեցում՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,

գ) հայտնաբերել, ձևավորել, զարգացնել և կապակցել գերազանցության օջախները:

**1) Ձևավորել ներուժի և հնարավորությունների դրսևորման բարենպաստ միջավայր**

Հայեցակարգով նախատեսված բարեփոխումների իրականացմանն օժանդակելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բարեփոխումների համար բարենպաստ միջավայր ստեղծել: Արդյունավետ կանոնների սահմանումը, իրականացումը ու պահպանումը կարող է ինքնաբուխ բարեփոխումների հանգեցնել՝ առանց լայնածավալ կենտրոնական միջամտության: Նման մոտեցումը ենթադրում է նվազագույնի հասցնել պետության ուղղակի միջամտությունը մասնագիտական կրթության կազմակերպմանը և փոխարենը մասնագիտական կրթության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել՝ սահմանելով կրթության հեռանկարային զարգացման ուղենիշները և վերահսկելով կրթության կառավարման ու կազմակերպման որակը:

Բարենպաստ միջավայրը ենթադրում է.

ա) վստահության, համագործակցության մթնոլորտ,

բ) կրթական ծառայությունների մատուցման մրցակցային դաշտ,

գ) համապատասխան ենթակառուցվածքներ և հզորություններ:

Նման ռազմավարության շնորհիվ հնարավոր կլինի վերանայել և բարելավել սահմանված ռազմավարական նպատակների իրականացմանը խոչընդոտող օրենսդրական դաշտը, գլխավոր նպատակների իրականացման գործում ստանալ մասնավոր հատվածի օժանդակությունը, ինչպես նաև սահմանել անհրաժեշտ չափորոշիչներ և արդյունավետ վերահսկել կրթության կառավարման ու կազմակերպման որակը:

**2) Կիրառել ռեսուրսների տարբերակված բաշխում՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ**

Պետությունն ունի կրթական համակարգում ընդգրկված սովորողներին և հաստատություններին մրցակցային հիմունքներով հավասար հնարավորություններ տրամադրելու պարտավորություն: Կարևորելով հավասարության սկզբունքը՝

միաժամանակ, կորդեգրվեն այնպիսի մոտեցումներ, որոնք ռեսուրսների արդար, սակայն տարբերակված բաշխման միջոցով առավելագույն հնարավորություններ կապահովեն լավ արդյունք ցուցաբերողների համար: Նման մոտեցումն ուղղակիորեն կնպաստի ծրագրով սահմանված առաջին գլխավոր նպատակի՝ «գերազանց կրթական նվաճումների» ձեռքբերմանը, ինչն իր հերթին կհանգեցնի մյուս երկու գերնպատակների իրականացմանը:

Այս մոտեցումը նախատեսում է.

ա) աջակցել սովորողներին ինքնադրսևորման հնարավորություններ ընձեռող ծրագրերի իրականացմանը,

բ) աջակցել լավագույն սովորողների և հաստատությունների բացահայտմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

գ) աջակցել այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք առավելագույնի կհասցնեն լավագույն կրթական արդյունքներ ունեցողներին առաջարկվող կրթական հնարավորությունները,

դ) աջակցություն ցուցաբերել այն նախաձեռնություններին, որոնք ճկուն կրթական ծառայություններ և կրթական հնարավորություններ են առաջարկում՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, սոցիալական ծագումից:

**3) Հայտնաբերել, ձևավորել, զարգացնել և կապակցել գերազանցության օջախները**

Բարեփոխումներն արագացնելու և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել գերազանցության օջախների միջոցով կրթական համակարգը զարգացնելու մոտեցումը: Այս մոտեցումը ենթադրում է բարեփոխումներն իրականացնել մի կողմից, օրինակելի կենտրոններ հայտնաբերելու և զարգացնելու, մյուս կողմից, նմանատիպ կենտրոններ ստեղծելու միջոցով: Այդ կենտրոնները, դառնալով գերազանցության օջախներ, ստանձնում են բարեփոխումների առաջնորդի և տարածողի դերը: Նման օջախների հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ վերջիններս ձևավորվում են հաստատությունների կամ ցանցերի ներսում արագ աճելու նպատակով՝ ժամանակի ընթացքում վերաճելով ամբողջական կառույցների: Կրթական համակարգի համաչափ զարգացում ապահովելու համար իրականացվելու է բոլոր մարզերում գերազանցության օջախներ ձևավորելու քաղաքականություն: Որպեսզի օջախների ազդեցությունն առավելագույնս դրսևորվի, անհրաժեշտ է դրանց փոխկապակցումը ինչպես միմյանց, այնպես էլ արտերկրի կառույցների հետ: Գերազանցության օջախները խրախուսվելու են և պարտավորություն են ստանձնելու նոր օջախների ձևավորմանն աջակցելու համար:

Նման ռազմավարությունը նախատեսում է.

ա) աջակցել կրթական համակարգի հաստատությունների ներսում եղած օրինակելի միավորների՝ «փոփոխության սաղմերի» զարգացմանը և նորերի ստեղծմանը,

բ) նպաստել, որ այդ օջախները ժամանակի ընթացքում վերաճեն լիարժեք կառույցների,

գ) օժանդակել, որ գերազանցության օջախները կապվեն միմյանց՝ վերջիններիս ազդեցությունը մեծացնելու համար,

դ) ձևավորել ներուժի և հնարավորությունների դրսևորման բարենպաստ միջավայր:

## II. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումները սկսվել են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ սոցիալ-տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, երբ կարևորվեց հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին մեր ինտեգրվելը, կրթության՝ որպես հիմնարար արժեքները փոխանցող և ազգային հարատևումն ապահովող համակարգի անհրաժեշտությունը: Մասնագիտական կրթական համակարգի առջև ծառացած խնդիրները տարաբնույթ էին ու պայմանավորված կյանքի հրամայականով, իսկ լուծումները՝ օրակարգային, ելնելով կրթության արագընթաց գլոբալացման և երկրի մրցունակության ապահովման անհրաժեշտությունից:

Ներկայումս մասնագիտական կրթության բնագավառի գերակա խնդիրն է կրթության որակի բարձրացումը, ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

### 1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգում իրականացված բարեփոխումների հիմնական ուղղությունները

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային

չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը»:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2004թ. հավանության է արժանացել «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որով սահմանվել է այս համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը 2005թ. ընդունել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտերի նախագծեր, որոնց հիմնական նպատակն է ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008թթ. գործողությունների պլանը»:

Այս ոլորտի բարեփոխումներն ուղղված են կրթական չափորոշիչների և ծրագրերի արդիականացմանը, մանկավարժական կադրերի վերապատրաստմանը, ուսումնանյութական ապահովվածության բարելավմանը, կառավարման ու ղեկավարման համակարգի ռացիոնալացմանը, ինչպես նաև մեծահասակների կրթության ապահովմանը: Մեծ տեղ է հատկացվելու նաև հաստատությունների, կազմակերպությունների ու դրանց միությունների միջև համագործակցության խթանմանը: Հաստատվել են թվով 24 մասնագիտության պետական կրթական չափորոշիչներ, որոնց հիման վրա վերանայվում են ուսումնական ծրագրերը և պլանները:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է 28 արհեստագործական ուսումնարաններում և 16 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում: Համակարգում ընդգրկված է 6500 սովորող: Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների (ՄՄՈՒՀ) թիվը կազմում է 80, որոնցում ուսանում է շուրջ 27500 սովորող:

## 2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության հիմնախնդիրները

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները պայմանավորված են հետևյալ գործոններով՝

- երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով,

- ժամանակակից աշխարհում տեղի ունեցող գիտության և տեխնիկայի արագընթաց փոփոխություններով,
- ազգային ինքնության ձևավորման, պահպանման ու զարգացման գործում կրթության խաթարված դերով,
- կրթության շարունակական զարգացման համար անհրաժեշտ պայմանների բացակայությամբ,
- կառուցվածքային գործազրկության մեծ ծավալներով,
- գյուղական երիտասարդության համար կրթական համակարգի ոչ մատչելիությամբ,
- առկա ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմամբ և այլն:

Հայաստանում նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության և կրթական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովումը: Համակարգը ծերացման կայուն միտում ունի և առկա է որակյալ կադրերի արտահոսք:

Համակարգված չեն դասավանդող անձնակազմի վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերը: Լուծված չեն նախնական և միջին մասնագիտական կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար առանցքային նշանակություն ունեցող տեղեկատվական հաղորդակցման և դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման խնդիրները, թույլ է ձեռնարկություն-ուսումնական հաստատություն կապը, բացակայում են արդյունավետ մեխանիզմները ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման առումով:

Աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը: Ներկայիս համակարգը բավարար ճկուն չէ և չի հասցնում ինքնակամ արձագանքել տնտեսության արագ զարգացող որոշ ճյուղերի պահանջներին:

Բացի այդ, գոյություն չունեն արդյունավետ միջազգային հարաբերություններ և համագործակցության զարգացման մեխանիզմներ՝ այլ երկրների նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու համար, միևնույն ժամանակ հաճախ չի ապահովվում միջազգային կազմակերպությունների հետ իրականացված փորձնական ծրագրերի շարունակությունը:

3) Օրենսդրական դաշտի անկատարություն

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում քաղաքականության լիարժեք իրականացմանը խոչընդոտում են նաև օրենքների և ենթաօրենսդրական ակտերի թերկիրառումը, դրանց կիրարկման մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը, ինչպես նաև օրենսդրական դաշտում առկա հակասությունները: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներկայումս չի ապահովում «Կրթության մասին» ՀՀ օրենքով հռչակված և երաշխավորված՝ կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

Անհրաժեշտ է իրավական փաստաթղթերի մակարդակով խրախուսել գործատուների մասնակցությունը մասնագիտական կրթության կազմակերպման գործում, քաջալերել նրանց Հայաստանի գիտելիքահեն ոլորտներում ներդրումներ կատարելուն, որը կնպաստի Հայաստանի կրթական և գիտական արդյունքի միջազգային պահանջարկի ձևավորմանը:

Հայաստանի տնտեսությունը աճում է արագ տեմպերով, սակայն միջազգային երկարաժամկետ մրցունակության համար բավարար հիմքեր չեն ստեղծել: Հայաստանն այսօր կանգնած է աճի նոր՝ հիմնականում գիտելիքահեն աղբյուրների ստեղծման և զարգացման անհրաժեշտության առջև, որը հնարավոր է միայն երկրում համահունչ ռազմավարության իրականացման պայմաններում: Հանրապետությունում կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները լավ հենքային պայմաններ են առաջադրում և անհրաժեշտ է այն լրացնել՝ յուրահատուկ, երկրին համահունչ բովանդակությամբ, ապահովել հասարակության մասնակցային գործընթացը, հիմքում ունենալ փորձագիտական խորը ուսումնասիրությունների վկայություն և սահմանել այն ռազմավարական ուղղությունները, որոնք միտված են երկրի մրցունակության խթանմանը:

## III. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել մասնագիտական կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ՄԿՈՒ կրթական չափորոշիչների նվազագույն պահանջները

սահմանել հիմք ընդունելով Որակավորումների ազգային շրջանակը, զբաղմունքների դասակարգիչը, մասնագիտությունների որակավորման բնութագրերը: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման է ռեսուրսների օգտագործման նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը:

Ապահովելով մասնագիտական կրթության համակարգի արդեն իսկ արձանագրված ձեռքբերումների աստիճանական զարգացումն ու ընդլայնումը, կրթության զարգացումներն առավել նպատակային և արդյունավետ դարձնելու համար, հետագա զարգացումները կիրականացվեն ստորև ներկայացվող գերակա ուղղություններով:

1) Բացառիկ նվաճումներին միտված ծրագրերը խրախուսող ներդրումային քաղաքականություն,

2) Բարեփոխումներն առաջնորդելու կարողությունների հզորացում,

3) Հանրությանն անմիջական հաշվետվողականության և թափանցիկության բարձրացում,

4) Կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավում,

5) Դասավանդող կադրերի կարողությունների հզորացում,

6) Համակարգի օպտիմալացում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ,

7) Միջազգային ցանցերում մասնակցության ընդլայնում,

8) Կրթական ծրագրերի համապատասխանեցում տնտեսական զարգացման պահանջներին,

9) ուսուցման կարճաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում,

10) մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնակցություն մեծահասակների կրթության կազմակերպման ու իրականացման գործում:

## IV. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը կապահովվի ռազմավարական մոտեցումներին և գերակայություններին համապատասխան նպատակային ծրագրերի միջոցով, որոնք կհանդիսանան ներկայումս իրականացվող հիմնական ծրագրերի տրամաբանական շարունակությունը: Իրականացվող ծրագրերը և բարեփոխումների ռազմավարությունները կկերանայվեն գլխավոր նպատակներին և ռազմավարական ուղղություններին համապատասխան:

**1. Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ինտեգրում միասնական եվրոպական կրթական տարածքին.**

ա) Խթանել մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին:

բ) ՄԿՈՒ որակավորումների համակարգը համապատասխանեցնել որակավորումների եվրոպական շրջանակին, զբաղմունքների դասակարգչին, մասնագիտությունների որակավորման բնութագրերին:

գ) Ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգ:

դ) Բարձրացնել համակարգի մասնագետների տեղեկացվածությունը օտարերկրյա պետությունների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ:

ե) Միանալ Կոպենհագենյան հռչակագրին և գործընթացին:

զ) Բաց և ժողովրդա-վարական ՄԿՈՒ համակարգի ստեղծում

է) Օժանդակել ՄԿՈՒ հաստատությունների ցանցավորմանը:

**2. ՄԿՈՒ համակարգի արդյունավորության և արդյունավետության ապահովում.**

ա) Ստեղծել մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգ:

բ) Ձևավորել աշխատաշուկայի վերլուծության և մասնագիտական չափորոշիչների վրա հիմնված կարողութենամետ կրթական չափորոշիչներ:

գ) Խթանել սոցիալական գործընկերությունը և երկխոսությունը:

դ) Ձևավորել ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանց:

ե) Բարելավել ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազան:

զ) Բարելավել ուսումնական հաստատությունների հաշվետվողականությունը և գործունեության թափանցիկությունը:

է) Բարելավել մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման որակը

ը) Ձևավորել ուսումնական հաստատությունների ժամանակակից կառավարման մեխանիզմերը:

թ) Ապահովել ուսումնական հաստատությունների սովորողների եւ շրջանավարտների մասնագիտական հմտությունները՝ համապատասխան տնտեսության և աշխատաշուկայի կարիքներին:

ժ) Ապահովել ուսումնական հաստատությունների ֆինասավորման միջոցների ծախսերի արդյունավետությունը:

ժա) Իրականացնել ՄԿՈՒ համակարգի պլանավորումն աշխատաշուկայի և երկրի տնտեսական զարգացման ընթացիկ և ռազմավարական կարիքներին համապատասխան:

ժբ) Ապահովել մոնիթորինգի արդյունավետ իրականացում և հետադարձ կապ:

ժգ) Ապահովել կրթության որակի գնահատման չափորոշիչների մշակում և ներդրում:

**3. Ողջ կյանքի ընթացքում ուսումնառության հնարավորությունների ստեղծում.**

ա) Ապահովել կրթության շարունակականությունը,

բ) Ապահովել մասնագիտական ուսուցման մատչելիությունը, անկախ նախընթաց կրթության մակարդակից:

գ) Բարելավել մեծահասակների կրթության օրենսդրությունը:

դ) Ապահովել քաղաքացու մրցունակությունը աշխատաշուկայում:

ե) Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչում:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2008 թվականի
դեկտեմբերի 18-ի նիստի N 51
արձանագրային որոշման

# Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009*-2011թթ. միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը

| Խնդիրներ և գործողություններ | Վերջնա-ժամկետ | Ակնկալվող արդյունքներ | Չեռքբերման ցուցիչ | Պատաս-խանա-տուներ | Պարզաբանումներ իրականացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|
| ԲՆԱԳԱՎԱՌ 1. ՄԿՈւ ֆինանսավորման օպտիմալացում և կառավարման բարելավում | | | | | |
| **Խնդիր 1.1 Խթանել ՄԿՈւ հաստատութ-յունների կողմից լրացուցիչ միջոցների ստացումը ուսումնաարտադրական, մեծա-հասակների ուսուցման և եկամուտներ առաջացնող այլ գործունեությունների միջոցով** | **հունիս 2009թ.** | **Ուսումնական հաստատություն-ների եկամուտների ավելացում** | **Ուսումնական հաստատութ-յունների արտաբյուջետային մուտքերի ցուցանիշներ** | **ՀՀ կառավա-րություն ՀՀ ԿԳՆ** | |
| 1.1.1. Ուսումնասիրել և վերլուծել միջազգային փորձը ՄԿՈւ հաստատությունների լրացուցիչ եկամուտներ ապահովող գործունեության իրականացման ոլորտում | փետրվար 2009թ. | Տեղեկացվածություն ՄԿՈւ հաստատությունների լրացուցիչ եկամուտներ առաջացնող գործունեության հնարավոր տեսակների և մեխանիզմների վերաբերյալ | Կայացած ուսումնական այց ար-տասահմանյան երկրներ և փաս-տաթղթերով ամրագրված արդ-յունքներ: Միջազգային փորձի և Հայաստանում դրա հնարավոր կիրառման վերաբերյալ հա-մապարփակ փաստաթուղթ | ՀՀ ԿԳՆ | Կպահանջվի շուրջ 5 հոգու գործու-ղում զարգացած ՄԿՈՒ համակարգ ունեցող եվրոպական որևէ երկիր (երկրներ)՝ մինչև 7 օրով[1]: |
| 1.1.2. Մշակել, ընդունել և հրապարակել երաշխավորություններ՝ ուսումնական հաստատությունների լրացուցիչ եկամուտներ առաջացնող գործունեության վերաբերյալ | ապրիլ 2009թ. | Ուսումնական հաստատություն-ների լրացուցիչ եկամուտներ ա-ռաջացնող գործունեության հան-դեպ ժամանակակից մոտեցումը դարձել է պետական քաղաքականություն | Հրապարակված երաշխավորություններ | ՀՀ ԿԳՆ | Կպահանջվի 30 օր տեղական փորձագիտություն: |

* Որոշ գործողությունների իրականացումն սկսվում է 2008 թվականից:
[1] Մեկ անձի գործուղման արժեքը կկազմի միջինը 1.200.000 դրամ՝ ներառյալ ճանապարհածախսը, օրապահիկը և ընդունող կողմի ծառայությունների արժեքը:

| Խնդիրներ և գործողություններ | Վերջնաժամկետ | Ակնկալվող արդյունքներ | Չեռքբերման ցուցիչ | Պատասխանատուներ | Պարզաբանումներ իրականացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|
| 1.1.3. Ընդունել ուսումնական հաստատությունների լրացուցիչ եկամուտներ առաջացնող գործողությունները խթանող նորմատիվային ակտեր | մայիս 2009թ. | Ուսումնական հաստատությունների լրացուցիչ եկամուտներ առաջացնող գործողությունների իրականացմանը նպաստող արդիական իրավական դաշտի առկայություն | Ընդունված նորմատիվային ակտեր | ՀՀ կառավարություն<br><br>ՀՀ ԿԳՆ | Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվի |
| 1.1.4. Ուսումնական հաստատությունների ղեկավարներին վերապատրաստել[2] կրթության ոլորտում մարկեթինգի և շրջանավարտների զբաղվածության ապահովման թեմաներով | հունիս 2009թ. | ՄԿՈւ հաստատությունների տնօրենները յուրացրել են և կարող են կիրառել մարկեթինգի և շրջանավարտների զբաղվածության ապահովման տեխնիկան | Վերապատրաստման մշակված և հաստատված ծրագիր: Առնվազն 40 վերապատրաստված ղեկավար (տնօրեն և տեղակալ) | ՀՀ ԿԳՆ | Կպահանջվի 40 հոգու վերապատրաստում 2 խմբով. յուրաքանչյուր խմբի համար՝ 5 օր: |
| **Խնդիր 1.2 Բարելավել ՄԿՈՒ համակարգի կառավարումը** | **դեկտ. 2010թ.** | **ՄԿՈՒ համակարգի կառավարման բարելավում** | | | |
| 1.2.1. Տրամադրել աջակցություն ԿԳՆ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը՝ ծրագրերի կառավարման գործառույթի իրականացմանը և վարչության անձնակազմի համապատասխան կարողությունների բարելավում | փետրվար 2009թ.. | ԿԳՆ նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունը արդյունավետ է իրականացնում Ծրագրերի կառավարման գործառույթը | Վերապատրաստման ծրագրեր, արտասահմանյան գործուղման հաշվետվություն, | ՀՀ ԿԳՆ | Նախատեսվում է վարչության 5 աշխատողի վերապատրաստում՝ յուրաքանչյուրի համար 30 օր: Բացի այդ նախատեսվում է վերապատրաստում արտասահմանյան գործուղման միջոցով: |
| 1.2.2. ՀՀ կառավարության կողմից ՄԿՈՒ համակարգին տրամադրվող օժանդակության և Եվրոպական Միության կողմից Հայաստանին տրամադրվող բյուջետային աջակցության հրապարակայնության և տեսանելիության ապահովման միջոցառումներ | փետրվար 2009թ.. | Հասարակությունը, այդ թվում՝ սոցիալական գործընկերները տեղեկացված են Հայաստանի ՄԿՈՒ համարագին տրամադրվող աջակցության մասին | Առնվազն 5 միջոցառում և թողարկված հաղորդագրություն | ՀՀ ԿԳՆ | Կիրականացվի զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվության հրապարակման և տպագիր հրատարակման միջոցով: Համապատասխան ֆինանսական միջոցները նախատեսված են ՀՀ 2008թ. պետական բյուջեով: |
| 1.2.3. ՄԿՈՒ վերաբերյալ եվրոպական և այլ միջազգային համապատասխան փաստաթղթերի թարգմանություն և տարածում | շարունակական՝ մինչև դեկտ. 2010թ. | ԿԳՆ, այլ շահագրգիռ գերատեսչությունները, սոցիալական գործընկերները տեղեկացված են ՄԿՈՒ վերաբերյալ եվրոպական և այլ միջազգային համապատասխան փաստաթղթերի բովանդակությանը | Առնվազն 20 փաստաթղթի հայերեն տարբերակներ | ՀՀ ԿԳՆ | Նախատեսվում է շուրջ 4.000 էջ թարգմանություն, որից շուրջ 800 էջն արդեն թարգմանված է 2008թ. ընթացքում: Բացի այդ նյութերի կիրատարակվեն 60.000 թերթ ծավալով: |
| 1.2.4. Վերանայել ու կատարելագործել ՄԿՈՒ քաղաքականությունն ու ռազմավարությունը | դեկտ. 2009թ. | Հայաստանի ՄԿՈՒ ոլորտի քաղաքականությունը և ռազմավարությունը բարելավված են՝ հետագայում բարեփոխումներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով | Ռազմավարական փաստաթուղթ | ՀՀ ԿԳՆ | Կպահանջվի 30 մարդ/օր տեղական փորձագիտական աշխատանք: Նախատեսված է 2009-2011թթ. ՄԺԾԾ-ով: |

[2] Ուսումնական հաստատությունների ղեկավարների այս և ստորև առաջարկվող վերապատրաստումները կարող են համատեղվել:

